ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ ՄԱԼԱՅԶԻԱ (Ք. ԿՈՒԱԼԱ ԼՈՒՄՊՈՒՐ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Դավիթ Սահակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ք. Կուալա Լումպուր (Մալայզիա), 2022թ. սեպտեմբերի 16-ից 23-ը:

4. **Հրավիրող կողմը.**

«Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերություն» (ICANN) Կառավարական խորհրդատվական կոմիտե (GAC):

5. **Գործուղման նպատակը.**

«Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերության» 75-րդ (ICANN75) ամենամյա համաժողովին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները.**

Մալայզիա այցի ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը «Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերության» 75-րդ (ICANN75) ամենամյա համաժողովի շրջանակներում մասնակցել է մի շարք նիստերի և քննարկումների:

Մասնավորապես՝ 2022թ. սեպտեմբերի 17-ին մասնակցել է Կառավարական խորհրդատվական կոմիտեի կարողությունների զարգացման և իրազեկման սեմինարին, որի ընթացքում քննարկվել են Կառավարական խորհրդատվական կոմիտեի ընդհանուր գործունեությունը, վերջինիս դերը բազմաշահառու համագործակցության մոդելում՝

համայնքային հարաբերությունները և համագործակցությունը, Կառավարական խորհրդատվական կոմիտեի ներկայացուցիչների դերը և հանձնաժողովի ներգրավվածությունը:

2022թ. սեպտեմբերի 18-ին կայացել է Կառավարական խորհրդատվական կոմիտեի կարողությունների զարգացման և իրազեկման սեմինարը, որի ընթացքում քննարկվել են բարձր մակարդակի ընդհանուր դոմենային անունների նոր փուլի ստեղծումը և հնարավոր զարգացումները: Կառավարական խորհրդատվական կոմիտեի հիմնական թեմաներն էին առաջնահերթ շահերը կառավարությունների համար, դոմենային անունների համակարգերի դերերն ու պարտականությունները՝ կառավարությունների հետ երկրի ծածկագրի կառավարիչների և ընդհանուր անունների հարաբերությունները, ընդհանուր անունների աջակցող կազմակերպության (GNSO) գրանցամատյանների դերը:

2022թ. սեպտեմբերի 19-ին Դավիթ Սահակյանը մասնակցել է Կառավարական խորհրդատվական կոմիտեի կողմից կազմակերպված միջոցառման բացման արարողությանը: Այնուհետև մասնակցել է Կառավարական խորհրդատվական կոմիտեի լիագումար նիստին, որից հետո կայացել են քննարկումներ ICANN-ի գործադիր ղեկավարության և տնօրենների վարչության հետ: Նաև կայացել է համատեղ քննարկում Կառավարական խորհրդատվական կոմիտեի և ընդհանուր անունների աջակցող կազմակերպության (GNSO) անդամների միջև:

2022թ. սեպտեմբերի 20-ին նախարարի տեղակալը մասնակցել է տվյալների պաշտպանության քաղաքականության և «WHOIS» տվյալների հավաքագրման համակարգի վերաբերյալ Կառավարական խորհրդատվական կոմիտեի քննարկմանը: Նույն օրը կայացել են նաև Երկրի կոդային անունների աջակցման կազմակերպության (ccNSO) և Կառավարական խորհրդատվական կոմիտեի, ինչպես նաև ICANN-ի խորհրդի և Կառավարական խորհրդատվական կոմիտեի համատեղ նիստերը:

2022թ. սեպտեմբերի 21-ին կայացել է Ընդլայնված խորհրդատվական կոմիտեի (ALAC) և Կառավարական խորհրդական կոմիտեի (GAC) համատեղ նիստը, ինչպես նաև «ICANN-ի դերը Ինտերնետ մասնատվածության, դոմենային անունների համակարգում» խորագրով նիստը:

2022թ. սեպտեմբերի 22-ին Դավիթ Սահակյանը մասնակցել է Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերության հանրային ֆորումի և Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերության 24-րդ տարեկան ընդհանուր հանդիպման լիագումար նիստերին:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը Մալայզիա այցի ընթացքում մասնակցել է նաև բարձր տեխնոլոգիաների համար Մալայզիայի արդյունաբերա-կառավարական խմբի (MIGHT) և «Confexhub» խմբի կողմից 2022թ. սեպտեմբերի 20-21-ը ք. Կուալա-Լումպուրում (Մալազիա) հիբրիդային ձևաչափով համատեղ կազմակերպված «Cities 4.0» 5-րդ միջազգային համաժողովի շրջանակներում կայացած ցուցահանդեսին (մասնակցության հրավերը ստացվել է 2022թ. սեպտեմբերի 9-ին):

«Տեղական գործողություններ, գլոբալ նվաճումներ» խորագրով համաժողովի համընդհանուր թեմայի նպատակն էր դյուրացնել քննարկումները և երկխոսությունները ռազմավարությունների վերաբերյալ՝ մշակելու գործնական ճանապարհային քարտեզ ԿԶՆ-ները տեղայնացնելու և խելացի քաղաքներ ստեղծելու նպատակով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

«Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերության» 75-րդ (ICANN75) ամենամյա համաժողովի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը ծանոթացել է քաղաքականության մշակման և Կառավարական խորհրդատվական կոմիտեի կապերի գծով փոխնախագահ Ռոբերտ Հոգարտի հետ, ում հետ քննարկվել են հետագա համագործակցության ուղիները:

Նաև Դավիթ Սահակյանը հանդիպել է Ընդհանուր անունների աջակցող կազմակերպության (GNSO) ներկայացուցիչ (նախկին GAC փոխնախագահ), Բուենոս Այրեսի համալսարանի դոցենտ, Ինտերնետի կառավարման Հարավային դպրոցի Ակադեմիական տնօրեն - Կարողությունների զարգացում, համալսարանի պրոֆեսոր. IP ցանցեր - տեղեկատվական անվտանգություն - IP ենթակառուցվածք - ՏՀՏ քաղաքականության և տեխնոլոգիաների փորձագետ Օլգա Կավալիին, որի հետ քննարկվել են Հայաստանի և Արգենտինայի ընդհանրական խնդիրները «Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերության» համատեքստում և հետագա համագործակցության ուղիները:

Դավիթ Սահակյանին հնարավորություն է ընձեռնվել հանդիպել նաև Ասիա-Խաղաղօվկիանոսյան բարձր մակարդակի դոմենային միության (APTLD) գլխավոր տնօրեն

Լեոնիդ Տոդորովի հետ: Քննարկվել են տարածաշրջանում առկա խնդիրները և դիտարկվել հետագա համագործակցության հնարավոր ուղիները:

«Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերության» 75-րդ (ICANN75) ամենամյա համաժողովի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը հանդիպել է «IKHASAS» մալայզիական ընկերության գործադիր տնօրեն Ն.Գ. Տենգկու Դաթո Հիշամմադդին Զաիզիի հետ: «IKHASAS» մալայզիական ընկերության դուստր կազմակերպություն է հանդիսանում Հարավարևելյան Ասիայում ավտոմատացված համակարգերի (AFC) առաջատար մատակարար՝ «Longbow Technologies»-ը, որը նախագծում և կառուցում է ավտոմատացված սարքավորումներ՝ համատեղելով տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարագիտության, մեխանիկական և էլեկտրական ու միկրոէլեկտրոնիկայի լավագույն փորձը: Ն.Գ. Տենգկու Դաթո Հիշամմադդին Զաիզիի հետ քննարկվել են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համապատասխան հայկական ընկերությունների հետ փորձի փոխանակման հնարավորությունները:

«Cities 4.0» 5-րդ միջազգային համաժողովի շրջանակներում կայացած ցուցահանդեսի ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը հանդիպել է «eduCLaaS Sdn Bhd» ընկերության գործադիր տնօրեն Հիլմի Զակվանի հետ: Գործադիր տնօրենի հետ քննարկվել է հայկական ընկերությունների մասնագետների համար առկա և առցանց մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման և համապատասխան վկայականների տրամադրման հարցը:

Վերոնշյալ ցուցահանդեսի ընթացքում նախարարի տեղակալը հանդիպել է նաև գերմանական «FAME» ընկերության նախագծերի կառավարիչ Հեիկո Թեգտմեյերի հետ: Նախարարը ծանոթացել է ընկերության կողմից ներկայացվող խելացի քաղաքների լուծումների հետ և դիտարկել դրանց ներդրումը Հայաստանի Հանրապետությունում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

«Սահմանված անունների և թվերի համացանցային ընկերության» 75-րդ (ICANN75) ամենամյա համաժողովի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական

արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը հանդիպել է Համաշխարհային փոստային միության (UPU) «Թվային տնտեսություն և վաճառք» փոստային ծրագրի պատասխանատու Թրեյսի Հաքշովի հետ: Հանդիպման ընթացքում Դավիթ Սահակյանը ներկայացրել է «ՀայՓոստ» ՓԲԸ-ի գործունեությունը և վերջինիս կողմից թվայնացման ոլորտում իրականացվող ծրագրերը: Նախարարի տեղակալը ներկայացրել է «ՀայՓոստ» ՓԲԸ-ի դուստր ընկերության կողմից մշակված թվայնացման ծրագիրը, ինչը հետաքրքրություն է առաջացրել, և դիտարկվել է այդ ծրագրի համաշխարհային շուկայում կիրառելու հնարավորությունը: «ՀայՓոստ» ՓԲԸ-ի գործունեությանը ավելի լավ ծանոթանալու նպատակով պայմանավորվածություն է ձեռք բերվել Թրեյսի Հաքշովի Հայաստանի Հանրապետություն հնարավոր այցի վերաբերյալ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը հանդիպում է ունեցել նաև Մալայզիայում հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնց հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել աջակցություն ցուցաբերել ԲՏ ոլորտի հայկական ընկերություններին՝ տարածաշրջանային շուկա մուտք գործելու հարցում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել շարունակել քննարկումները համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքներ և ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ
28.09.2022թ.